

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 5

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական խորհրդի 2018թ. հուլիսի 3-ի նիստի
Գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 50-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ընտրություններ:
2. Գիտական կոչումների շնորհում:
3. Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին:
Ձեկ. Մհեր Մելիք-Բախշյան
4. Կրթական ծրագրերի մասին:
Ձեկ. Մհեր Մելիք-Բախշյան
5. Համալսարանում կրթության էլեկտրոնային կառավարման Google
Classroom հարթակի մասին:
Ձեկ. Մկրտիչ Ավագյան
6. Գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների
հաշվետվություններ:
Ձեկ. Աելիտա Դոլուխանյան, Սրբուհի Գևորգյան,
Գևորգ Թադևոսյան
7. Համալսարանի 020 և 064 մասնագիտական խորհուրդների
նախագահների հաշվետվություններ:
Ձեկ. Մելանյա Աստվածատրյան, Սրբուհի Գևորգյան
8. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանը ներկաներին
առաջարկեց հաստատել նիստի օրակարգը, եթե նրանք այլ առաջարկություններ
չունեն:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին օրակարգը:

Ծննդյան հոբելյանի առթիվ պարոն Միրզախանյանը շնորհավորեց համալսարանի երեք դասախոսների և նրանց շնորհեց դրամական պարգև:

Գիտական խորհրդի նախագահը շնորհավորեց նաև համալսարանի դասախոսներ Արա Հակոբյանին, Կամո Վարդանյանին, Լուսինե Ղուլղազարյանին պրոֆեսորի գիտական կոչում և Ալվարդ Գրիգորյանին, Գայանե Ծատուրյանին, Էդուարդ Մելքոնյանին, Սուսաննա Մուրադյանին, Լիլիթ Սարվազյանին, Սեյրան Շահումյարյանին դոցենտի գիտական կոչում ստանալու կապակցությամբ և հաճնեց վկայագրերը:

Լսեցին – Հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Աելիտա Դոլուխանյանի հաղորդումը Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ընտրության և Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի ընտրության մասին:

Տիկին Դոլուխանյանը ներկայացրեց Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի թեկնածու, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Ազատյանի գիտամանկավարժական գործունեությունը և Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի թեկնածու, Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, բնաստիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի գիտամանկավարժական գործունեությունը: Տիկին Դոլուխանյանն ասաց, որ հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովը որոշում է կայացրել գիտական խորհրդին ներկայացնել Թերեզա Ազատյանի թեկնածությունը՝ Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրությանը մասնակցելու համար և Լալիկ Խաչատրյանի թեկնածությունը՝ Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի թափուր պաշտոնի ընտրությանը մասնակցելու համար:

Որոշեցին – Թերեզա Ազատյանի, Լալիկ Խաչատրյանի թեկնածությունները դնել փակ գաղտնի քվեարկության:

Լսեցին – Գիտական և ուսումնամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը համալսարանի չորս դասախոսների գիտական կոչումներ շնորհելու մասին:(Կից՝ տես ցուցակը):

Որոշեցին – Համալսարանի դասախոսներ Սամվել Պողոսյանի, Հայկ Գրիգորյանի, Մարիամ Եղյանի և Լևոն Նազարյանի թեկնածությունները դնել գաղտնի քվեարկության:

Լսեցին – Ձայներ հաշվող հանձնաժողովի ընտրության մասին:

Որոշեցին – Ստեղծել ձայներ հաշվող հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Զուլիետա Գյուլամիրյան- նախագահ

2. Սիրանուշ Կարապետյան
3. Ռուզաննա Պետրոսյան
4. Գայանե Քոլոյան
5. Ներսիկ Մարգարյան

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ջուլիետա Գյուլամիրյանի հաղորդումը Հատուկ Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ընտրության և Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի ընտրության քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկության արդյունքներն են.

Թերեզա Ազատյան (Հատուկ մանկավարժության և հոգեբանությանի ամբիոնի վարիչի պաշտոնի համար) - 46 կողմ, 4 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Լալիկ Խաչատրյան (Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի համար) – 42 կողմ, 8 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

1. Որոշեցին –

– Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 50-ը, 46 կողմ, 4 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյանին համարել ընտրված Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնում

– Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 50-ը, 42 կողմ, 8 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Մնացականի Խաչատրյանին համարել ընտրված Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ջուլիետա Գյուլամիրյանի հաղորդումը գիտական կոչումների շնորհման քվեարկության արդյունքների մասին:

Սամվել Պողոսյան (պրոֆեսորի կոչման համար) – 45 կողմ, 5 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Գրիգորյան Հայկ (դոցենտի կոչման համար) – 48 կողմ, 2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Եղյան Մարիամ (դոցենտի կոչման համար) – 49 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Նազարյան Լևոն (դոցենտի կոչման համար) – 44 կողմ, 6 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

2. Որոշեցին –

Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 50-ը, 45 կողմ, 5 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մամվել Անդրանիկի Պողոսյանին <<Հայոց պատմություն>> մասնագիտության գծով շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 6(ա) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 50-ը, 49 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Հայոց պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Մարիամ Երվանդի Եղյանին <<Հայոց պատմություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 50-ը, 48 կողմ, 2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Հայկ Իշխանի Գրիգորյանին <<Համաշխարհային պատմություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 50-ը, 44 կողմ, 6 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Լևոն Հենրիկի Նազարյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, և դիմել ՀՀ ԲՈԿ այդ որոշումը հաստատելու խնդրանքով:

Լսեցին - Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին:(Զեկ.՝ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան):

3. Որոշեցին –Հանձնարարել համալսարանի ֆակուլտետների ղեկաններին և ամբիոնների վարիչներին.

- 1) Ֆակուլտետների խորհուրդներում և ամբիոնների նիստերում քննարկել հանձնաժողովների նախագահների կողմից արված առաջարկություններն ու դիտողություններ:
- 2) Մինչև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը ամբիոնների նիստերում քննարկման առարկա դարձնել թեզերի ղեկավարների հաղորդումները շրջանավարտների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ: Պաշտպանության երաշխավորել միայն համապատասխան մակարդակ ունեցող աշխատանքները:
- 3) Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները հաստատելիս հաշվի առնել դրանց արդիականությունը և բացառել տարեց տարի կրկնվող թեմաները:

- 4) Իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ ակտիվացնելու ուսանողների մասնակցությունը նախաքննական կոնսուլտացիաներին:
- 5) Մասնագիտական առարկաների շրջանակներում մշակել և ներդնել հատուկ դասընթաց գիտական ապարատի վերաբերյալ:

Լսեցին - Կրթական ծրագրերի մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան):

4. Որոշեցին –

1. Հաստատել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի.

ա/ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի թվով 44

մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն հավելված 1-ի,

բ/ բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի թվով 38

մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն հավելված 2-ի,

գ/ մագիստրատուրայի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի թվով

55 մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն հավելված

3-ի:

դ/ մագիստրատուրայի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի

թվով 6 մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն

հավելված 4-ի:

2. Հանձնարարել՝

ա/ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը

/պետ՝ Մկրտիչ Ավագյան/ մինչև սույն թվականի հուլիսի 15-ը ավարտել

ՀՊՄՀ բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ուսուցմամբ կրթական

ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի լրամշակումը

և ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստատմանը,

բ/ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների

կառավարման բաժնին /պետ՝ Շուշանիկ Արշակյան/ հաստատված

ուսումնական պլանները ներդնել ուսումնական ծավալների,

ծանրաբեռնվածությունների հաշվառման և բաշխման միասնական

էլեկտրոնային համակարգ, 2018-2019 ուսումնական տարվա ամբիոնների

տարեկան ուսումնական աշխատանքների ծավալները, ֆակուլտետի և

ամբիոնի կողմից ներկայացվող պրոֆեսորադասախոսական անձնակազմի

տարեկան անհատական բեռնվածությունները հաստատել սույն

ուսումնական պլանների առարկայակազմի համապատասխանությամբ,

գ/ ֆակուլտետների ղեկաններին՝ մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը

ավարտել ՀՊՄՀ բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ուսուցմամբ

բարձրագույն կրթական մասնագիտությունների մասնագրերի լրամշակումը,

հաստատել ֆակուլտետային խորհրդներում և ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհրդի վավերացմանը,

- դ/ ամբիոնների վարիչներին՝ մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը կազմակերպել քննարկումների շարք և հաստատել ՀՊՄՀ մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ուսուցմամբ բարձրագույն կրթական ծրագրերի լրամշակված մասնագրերում առկա դասընթացների առարկայական նկարագրերը: Առարկայական նկարագրերում վերջարդյունքները համապատասխանեցնել ՄԿԾ-ների մասնագիտական գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական և ընդհանրական փոխանցելի կարողությունների կրթական էլքային արդյունքներին:
3. Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյանին ապահովել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված հանձնարարականների կատարումը:
 4. Սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանները ուժի մեջ են մտնում 2018-2019 ուսումնական տարվանից /գործում է առաջին կուրսից/:
 5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Համալսարանի ռեկտորին:

Լսեցին - Համալսարանում կրթության էլեկտրոնային կառավարման Google Classroom հարթակի մասին: (Զեկ.՝ Մկրտիչ Ավագյան):

ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակը հանդիսանում է համալսարանի ձեռքբերումը: Ուստի և համալսարանը շարունակելու է համակարգի կիրառումը՝ բարելավելով և զարգացնելով այն: ՀՊՄՀ-ն էլեկտրոնային ուսուցման հարթակը համալսարանի ուսանող-դասախոս հաղորդակցական գլխավոր հարթակն է, որի առաջնային գործառույթը ուսանողների մոտ ստեղծագործականության, քննական մտածողության, ինքնուրույնության խթանումն ու զարգացումն է՝ մասնագիտական կրթական ծրագրում առկա դասընթացների կրթության բովանդակության շրջանառման, դասընթացի տեղեկատվական, կազմակերպչական, ուսումնական և հետազոտական աշխատանքների համակարգման, անհրաժեշտ հիմնական և օժանդակ ժամանակակից գրականության տրամադրման և ՄԿԾ դասընթացների էլքային արդյունքներից բխող այլ գործառույթների կիրառմամբ:

5. Որոշեցին - Գնահատվող էլեկտրոնային հանձնարարությունների վերաբերյալ.

1. ՀՊՄՀ էլեկտրոնային հարթակում մեծաքանակ հանձնարարությունների տրամադրումը ուսանողներին համարել ոչ նպատակահարմար,
2. Հանձնարարել ՀՊՄՀ ամբիոններին.

2018/19 ուս. տարվանից ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակում ուսանողներին տրվող հանձնարարությունները անմիջականորեն բխեցնել ուսումնական տարվա սկզբին ամբիոնում հաստատված առարկայական նկարագրի թեմատիկ տրոհման մեջ

ամրագրված ուսումնառության մեթոդաբանական բաժնի պահանջներից հանձնարարականի տրամադրումը՝ պայմանավորվել կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքներով և ամբիոնի հաստատած որոշմամբ պայմանավորված առարկայի ուսուցման առանձնահատկություններով:

3. Դասընթացի շրջանակներում գնահատվող առաջադրանքների կիրառման մասին որոշումները կայացնել միայն ամբիոնների նիստերում քննարկման և հաստատման արդյունքում՝ առարկայի շրջանակում գնահատվող առաջադրանքի անհրաժեշտության մասին դասախոսի գրավոր հիմնավորմամբ՝ ցույց տալով այդ առաջադրանքի տեղը թեմատիկ տրոհման մեջ, տվյալ առաջադրանքի գնահատման հստակ չափանիշներն ու մեխանիզմները, ինչպես նաև այն, թե ինչպես է գնահատվող առաջադրանքը արտացոլվում ուսանողի ընդհանուր գնահատման բաղադրիչներում:
Էլեկտրոնային հարթակում դասախոսի ուսումնական գործունեության մշտադիտարկման ցուցիչների վերաբերյալ.
4. Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից Google Classroom հարթակում դասախոսների գործունեության մշտադիտարկումը և էլեկտրոնային աշխատանքի գնահատումը այսուհետ համարել ոչ նպատակահարմար,
5. Հանձնարարել ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը մինչև ս/թ սեպտեմբերի 15-ը վերակարգավորել բաժնի գործառույթները համալսարանում էլեկտրոնային կրթության կազմակերպման մեթոդական օգնության, աջակցության և աշխատանքների կոորդինացման և կառավարման տիրույթում,
6. 2018/19 ուս տարվանից ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակում էլեկտրոնային ուսուցման համակարգի հստակ իրավիճակի, այնտեղ հարթակում դասախոսների գործունեության մշտադիտարկման և էլեկտրոնային աշխատանքի գնահատման գործառույթները դնել ամբիոնների վրա,
7. Հանձնարարել ՀՊՄՀ ամբիոններին յուրաքանչյուր կիսամյակ երկու անգամ, ամբիոնի նիստերում քննարկել դասավանդվող դասընթացների էլեկտրոնային ԱՌԻՄՓ-ները և ուսումնական նյութերը, ուսանող դասախոս էլեկտրոնային հաղորդակցական վիճակը և խնդիրները մշտապես դարձնելով ամբիոնների նիստերում քննարկման առարկա,
8. Ուսումնական կիսամյակի սկզբին՝ օգոստոս-հունվար ամիսներին քննարկել և հաստատել դասընթացների էլեկտրոնային ԱՌԻՄՓ-ն, հանձնարարականի տրամադրումը /ըստ անհրաժեշտության/՝ պայմանավորված կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներով և առարկայի ուսուցման առանձնահատկություններով: Դասախոսի գրավոր հիմնավորման դեպքում հաստատել կիրարկվող գնահատվող առաջադրանքը, ցույց տալով այդ առաջադրանքի տեղը թեմատիկ տրոհման մեջ, տվյալ առաջադրանքի գնահատման հստակ չափանիշներն ու մեխանիզմները, ինչպես նաև այն, թե ինչպես է գնահատվող առաջադրանքը արտացոլվում ուսանողի ընդհանուր գնահատման բաղադրիչներում:

9. Ուսումնական կիսամյակի ավարտին՝ հունվար-հունիս ամիսներին լսել դասախոսների հաշվետվությունը, տարեսկզբին հաստատված էլեկտրոնային ուսուցման գործառույթներին համապատասխան, գնահատել աշխատանքը և բարելավել այն,

10. Հանձնարարել ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը ՀՀ «Կրթության մասին» օրենքի 28 հոդված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ դասախոսների դասավանդման արդյունավետությունը գնահատող հարցումների շրջանակում ընդգրկել նաև հարցեր ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման հարթակում դասախոսի և նրա կատարած աշխատանքի մասին՝ ուսանողի կողմից գնահատման նպատակով,

11. Հանձնարարել ՀՊՄՀ **Իրավաբանական կենտրոնի ղեկավարին և** Անձնակազմի հաշվառման բաժնին 2018/19 ուս. տարվանից պարտադիր համարել դասախոսների հետ կնքված պայմանագրերում նշումը, որ ՀՊՄՀ դասախոսը, ասիստենտը, դոցենտը և պրոֆեսորը պետք է իրականացնի ուսումնական պարապունքների վարում Google Classroom էլեկտրոնային հարթակում:

Լսեցին - Գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների հաշվետվություններ: (Զեկ՝ նախագահներ Աելիտա Դոլուխանյան, Սրբուհի Գևորգյան, Գևորգ Թադևոսյան(Կից՝ տես հաշվետվությունները):

6. Որոշեցին - Գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների հաշվետվությունները ընդունել ի գիտություն:

Լսեցին - Համալսարանի 020 և 064 մասնագիտական խորհուրդների նախագահների հաշվետվությունները:(Զեկ՝ Մելանյա Աստվածատրյան, Սրբուհի Գևորգյան): (Կից՝ տես հաշվետվությունները):

7. Որոշեցին - Համալսարանի 020 և 064 մասնագիտական խորհուրդների նախագահների հաշվետվությունները ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր.

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Մարուսյա Մանասյանի թեկնածուական ատենախոսության թեման, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Լիդա Բալաբեկյանի թեկնածուական ատենախոսության թեման, Տեխնոլոգիական կրթության ամբիոնի հայցորդ Աննա Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Քրիստինե Ազարյանի թեկնածուական ատենախոսության թեման, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Սիփան Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեման, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ ֆիզմաթ. գիտ. թեկնածու Վաղարշակ Ոսկանյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատելու մասին:

8. Որոշեցին – Հաստատել.

- Մարուսյա Մանասյանի <<Դեկորատիվ կիրառական արվեստը կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության համակարգում>> /ԺԳ.00.02.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման:(Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Լեմա Ներսիսյան):
- Լիդա Բալաբեկյանի <<Լսողության խանգարում ունեցող հայախոս վաղ տարիքի երեխաների բանավոր խոսքի ձևավորումն ընտանիքում>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ազարյան):
- Սիփան Ասատրյանի <<Չտեսնող դպրոցականների լսողական ընկալման զարգացման մանկավարժական պայմանները>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ազարյան):
- Քրիստինե Ազարյանի <<Թույլ տեսնող կրտսեր դպրոցականների գրավոր խոսքի տեսագրաֆիկական խանգարումների կանխարգելման մեթոդները>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման: (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. թեկնածու , դոցենտ Էլլա Կաֆյան):
- Աննա Հակոբյանի <<Ինժեներական մտածողության ձևավորման առանձնահատկությունները հիմնական դպրոցի <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման գործընթացում>> /ԺԳ.00.02.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման: (Գիտական ղեկավար՝ տեխն. գիտ. դոկտոր , պրոֆեսոր Արտակ Սահրադյան):
- Վաղարշակ Ոսկանյանի <<Սովորողների հետազոտական կարողությունների և տեսական մտածողության ձևավորման մեթոդաբանական հիմունքները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում>> /ԺԳ.00.02.թվանիշով/ դոկտորական ատենախոսության թեման հաստատել:

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման և գիտական ղեկավարի փոփոխության մասին:

9. Որոշեցին – Տաթևիկ Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել <<Էրգոթերապևտիկ մեթոդների կիրառումը հաշմանդամություն ունեցող դեռահասների սոցիալ-կենցաղային պայմանների հարմարման գործընթացում>> /ԺԳ.00.01.թվանիշով/ վերնագրով և գիտական ղեկավար նշանակել մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Մարիաննա Հարությունյանին:

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Ջուլիետա Գյուլամիրյանի <<Մայրենիի ուսուցման մեթոդիկա>> ուսումնական ձեռնարկը, Գրետա Հակոբյանի <<Ուսուցչի

մասնագիտական գործունեության հիմունքներ>> ուսումնամեթոդական ձեռնարկը, Ռուզաննա Սիմոնյանի <<Բջջաբանության հիմունքներ>> ուսումնական ձեռնարկը, Դավիթ Պողոսյանի << ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների ստեղծման գործընթացը և կազմակերպման սկզբունքները>> գիտամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին:

10. Որոշեցին - Վերոնշյալ աշխատանքները երաշխավորել հրատարակության:

Լսեցին - Համալսարանի ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշիչի հաստատման մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյան):

11. Որոշեցին –

- Հաստատել ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշիչի փոփոխված տարբերակը 2018-2019 ուսումնական տարվանից սկսած:
- Ուժը կորցրած ճանաչել 2017 թվականի հունիսի 30-ին հաստատված ուսումնական աշխատանքների ծավալների հաշվարկի չափորոշիչը:

Լսեցին - Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչե Պարտիզունու անունով կոչելու մասին: (Զեկ.՝ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյան):

12. Որոշեցին - Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը կոչել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչե Պարտիզունու անունով: (49 կողմ, 1 դեմ):

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ